ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N:2

ՀՀՏԿԵՆ «Ջրառ» ՓԲԸ կարիքների համար ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-25/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով Արտաշատի մայր ջրանցքի մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան

17 հունվարի 2025 թ.
ժամը. 14:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	**Մ. Առաքելյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)
Անդամներ՝	**Ա. Արսենյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ) **Ն. Համբարձումյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ) **Ա. Գևորգյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ) **Ս. Ստեփանյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)
Հանձնաժողովի քարտուղար	**Կ. Բարսեղյան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀմ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Հայտերի բացման և գնահատման մասին

(Մ. Առաքելյան)

ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-25/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով Արտաշատի մայր ջրանցքի մաքրման և նորոգման աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ ք. Երևան Վարդանանց փակուղի 8, 6-րդ հարկ հասցեում, 2025 թ. հունվարի 17-ին, ժամը 14:00-ին:

Գնահատող հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված աշխատանքների ձեռքբերման գինը՝ մեկ թվով արտահայտված.

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Ձեռքբերման գինը (ՀՀ դրամ)
1	հիդրոտեխնիկական կառույցների մաքրման և նորոգման աշխատանքներ	24769600 (քսանչորս միլիոն յոթ հարյուր վաթսունինը հազար վեց հարյուր)

Հայտերի բացումն իրականացվել է www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված կարգով:

1.1.Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումները

ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-25/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով մասնակցության հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը
1	«Արտ Պլաս» ՍՊԸ
2	«ԳԱԲՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
3	«ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊԸ
4	«ԲԵՐԴՇԻՆ» ՍՊԸ

1.2 Տվյալներ յուրաքանչյուր բացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

«ԲԵՐԴՇԻՆ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում բացակայում է ՀՀ տարածքում քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում գործունեության տեսակի լիցենզիան և «Հիդրոտեխնիկական կառուցվածքներ» ներդիրը:

Գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և մասնակցին ծանուցել՝ մեկ աշխատանքային օրում ներկայացնել պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

(Մ. Առաքելյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել մասնակցների կողմից պահանջվող փաստաթղթերը ստանալու հաջորդ օրվա ժամը 10:00-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8, 6-րդ հարկ հասցեում

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ- 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Առաքելյան

Անդամներ՝ _____ Ա. Արսենյան

_____ Ն. Համբարձումյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ա. Ստեփանյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Կ. Բարսեղյան